

Գ.Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԿՈՐՈՒՅԱԼ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԲԱՆԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ Վ. ԹՈԹՈՎԵՆՑԻ «ԿՅԱՆՔԸ ՀԻՆ ՀՈՌՎՄԵԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎՐԱ» ՎԻՊԱԿՈՒՄ

Համառոտակի քննվում են արևմտահայ գավառի՝ վիպակում պատկերված կյանքն ու կենցաղը 20-րդ դարասկզբին՝ ընդհուպ մինչև մեծ եղեռնը: Համոզմունք է հայտնվում, որ գրողի համար անցյալի հիշողությունը սոսկ անդառնալի կորստի ցավ չէ. այն նաև ազգային ոգու անսասանության հավատն է՝ լավատեսորեն միտված ապագային: Այս տեսանկյունից ներկայացվում են վիպակի պոետիկայի, լեզվի ու ոճի մի շարք առանձնահատկություններ:

Առանցքային բառեր. հայրենի եզերք, եղեռն, վաչկատուն եկվորի լուծ, հայաշունչ գեղեցկություններ, կենսատու ակունք:

Ճշմարիտ արվեստագետի, գրողի ստեղծագործական ներշնչանքի ակունքը իր ծննդավայրն է՝ «փոքր» հայրենիքը: Հայ գրականության մեծ երախտավորներից շատերն իրենց մնայուն երկերում անմահացրել են նաև հայրենի եզերքի անանց պատկերները: Հիշենք Թումանյանի Լոռին, Իսահակյանի Շիրակը, Չարենցի Կարսը, Բակունցի ու Սահյանի Ջանգեզուրը, Մահարու Վանը... Վահան Թոթովենցն ասես լրացնում է այդ շարքը՝ կերտելով Եփրատի ափերին տարածված, *«կանաչների մեջ թաղված, պտուղներով ու վարդերով առափ»* Մեզրեի անկրկնելի գեղեցկությունը, քաղաք, որտեղ, ինչպես ինքը՝ Թոթովենցն է հիշում, *«երկինքն աչքի է ընկնում թափանցիկությամբ, աշունը՝ հեքիաթային առափությամբ»*:

Հայ նորագույն գրականության պայծառ դեմքի՝ Վահան Թոթովենցի ստեղծագործական կյանքը՝ հորդահոս, հախտուն, խռովահույզ ու հակասական, տևեց ընդամենը երեք տասնամյակ: Եթե նա չգրեր ծավալուն վեպեր, ճրագրային այլ երկեր, որոնք պայմանավորված էին խորհրդային ժամանակների պահանջով և կրում էին այդ ժամանակների գաղափարայնության կնիքը, և միայն ստեղծեր արևմտահայ գավառական կյանքին նվիրված պատմվածքներն ու «Կյանքը հին հոռվմեական ճանապարհի վրա» վիպակը, դարձյալ կունենար այն տեղը, որը նա արժանիորեն զբաղեցնում է մեր ազգային գրականության պատմության մեջ և իրեն ծնած ժողովրդի ոգևոր կյանքում:

Գրական տաղանդներով զարմանալիորեն հարուստ էր Խարբերդը. Միսաք Մեծարենց, Հովհաննես Թվկատինցի, Գարեգին Պեշկյությունյան, Երուխան, Սիամանթո, Ռուբեն Ջարդարյան, Ռուբեն Որբերյան, Համաստեղ, Վահե Հայկ... Տաղանդավոր հայրենակիցներից հետո և նրանց կողքին դժվար էր գրականության մեջ նոր խոսք ասել, առավել ևս լինել չկրկնվող ու ինքնատիպ: Թոթովենցի գրիչը, որ ստեղծագործական որոնումների սկզբնական փուլում չէր կարող, բնականաբար,

թոթափել այնքան մոտ և այնքան պաշտելի անհատականությունների ազդեցության կախարդիչ կապանքները, շատ շուտով դառնալու էր միանգամայն ինքնուրույն ու բարձրաճաշակ, թերևս, նույնքան ջերմ ու անզուգական: Հայ ժողովրդի պատմությունը, ազգային ու համաշխարհային գրականությունը հիմնովին յուրացրած, մի քանի օտար լեզուների խորապես տիրապետող, ամերիկյան կյանքին քաջաճանոթ Թոթովենցը, իրականացնելով ստեղծագործական բազմաբնույթ մտահղացումներ, ձեռնարկելով գրողի կոչման հետ որևէ ուղղակի կապ չունեցող աշխատանքներ (հասարակական եռանդուն գործունեություն ամերիկահայ համայնքում, ազգային-ազատագրական պայքարի մարտիկ զորավար Անդրանիկի գնդում, որտեղ նա միաժամանակ զորավարի թարգմանիչն էր, գրահրատարակչական և խմբագրական գործեր Թիֆլիսում և Կ.Պոլսում, ակտիվ մասնակցություն խորհրդահայ գրականության ձևավորմանն ու զարգացմանն ուղղված միջոցառումներին և այլն), ուներ միակ մշտական մտահոգությունը՝ հայրենիքի բախտը: Բոլոր դեպքերումների, պրպտումների ու ստեղծագործական պոռթկումների մեջ նա մշտապես գրողի իր տեսադաշտում էր պահում ամենասուրբ բանը՝ հայրենիքը, որի պատմության ողբերգական ու տառապալից շրջանի հետ զուգադիպել էր սեփական խռովահույզ ու բոլորանվեր կյանքը:

Հայրենասիրությունը, ինչ խոսք, Թոթովենցի մենաշնորհը չէր: Ցանկացած ճշմարիտ գրողի համար դա, այսպես ասած, ելակետային, մեկնարկային նախապայման է: Բայց առանձնահատուկ է Թոթովենցի հայրենասիրությունը: Եթե ստեղծագործական կյանքի սկզբում այն նրա համար ինքնադրսևորման անկեղծ ու հորդաբուխ միջոց էր՝ շաղախված հեքիաթային ծննդավայր, չքնաղ հայրենի բնաշխարհի ու սիրասուն հայրենիք ունենալու բնական հպարտությամբ, ապա վերջին տասնամյակում արդեն այդ հայրենասիրության մեջ գնալով մեծանում էին ազգի տխուր ներկան ու մշուշապատ գալիքը խորապես գիտակցող և ապագայի համար տագնապող հայորդու սրտի ցավը, կեղեքը, ծանր մտահոգությունը: Հիրավի, 20-30-ական թվականների խորհրդային իրականությունը, խրոխտ ու լավատես կարգախոսներով հանդերձ, մոայլ էր, խաբուսիկ ու նենգ: Մի կողմից՝ ազգի հիշողության մեջ տակավին շարունակվում էին եղեռնի սարսափները, մյուս կողմից՝ խորհրդային կայսրության բռնապետերի ախտահար ուղեղներում հասունանում էին նոր աղետների ու արհավիրքների հրեշավոր ծրագրեր, որոնց զոհերի թվում շուտով պետք է հայտնվեին հայ ժողովրդի շատ ու շատ պայծառամիտ որդիներ (նաև ինքը՝ Թոթովենցը):

Համատարած անվստահության դավադիր մղձավանջում մեծերի խորաթափանց միտքը ապագայի անորոշության մեջ որոնում ու ... չէր գտնում Հայրենիքը: Չարենցյան հանճարն ուրվագծում էր մահվան տեսիլներ, որոնք չարագույժ պտտվում էին Նաիրի երկրի գորշ երկնականարում, Բակունցը կարոտի կյորեսյան կերպարներ

էր վրձնում, Մահարին փորձում էր անդառնալի կորստից փրկել Վանի հուշերով լի ոսկե մակույկը: Դրանք ոչ թե անել ու անմխիթար վիճակում հայտնված ազգի «հոգեհանգստյան» աղոթքներ էին, այլ լուսավոր ապագայի հուսո ու հավատի անմար կայծեր, այլապես Չարենցը «յոթը խորհուրդ» չէր տա ապագայի սերմնացաններին, կամ Մահարին չէր փրկի Վանի հուշերը: Թոթովենցն էլ մանկան հիշողությամբ և գեղագետի ոգեղեն քանդակ մանրապատումներով անմահացնում էր «փոքր» հայրենիքի լուսավոր պատկերները: Կորուսյալ օրրանի «ծովացած» կարոտը հույսի ու հավատի անթեղած, բայց չմարող կրակով վերակերտում էր հին ու հեռավոր, իրական ու պատիր մի աշխարհ: Թոթովենցն ասես զգում էր, որ իրեն է վիճակված հայրենի եզերքի հուշը հավերժացնելու վերջին հնարավորությունը, և ինքը վերջին մոհիկաններից է, եթե ոչ վերջինը:

«Փոքր» հայրենիքի պատկերն առավել ընդգրկուն ու ամբողջական է «Կյանքը հին հոռվմեական ճանապարհի վրա» ինքնակենսագրական վիպակում (առաջին անգամ լույս է տեսել «Նոր ուղի» ամսագրի 1930 թ. 1-3-րդ համարներում), որի հերոսները հեղինակի հարազատներն են, բարեկամները, հարևանները, համաքաղաքացիները, ծանոթ ու անծանոթ մարդիկ: Վիպակում ներառված են նաև նախկինում լույս տեսած «Իմ հորաքույրը» և «Աղավնիներ» պատմվածքների սյուժեները: Թոթովենցը հայրենի բնության այդ գողտրիկ անկյան ու նրա բնակիչների մասին պատմում է իր անունից՝ առաջին դեմքով, մանկան հիշողության վրա խարսխված խոսքի պարզ ու ջերմաշունչ հյուսվածքով, որը զերծ է երկարաշունչ նկարագրություններից: Բնականաբար, առավել ավարտուն են ծնողների կերպարները: Հայրը՝ Հովհաննեսը, որին քաղաքում դիմում են Հաջի էֆենդիի պատվանունով, Մեզրեում և գավառում ճանաչված ու հարգված պաշտոնյա է, «համառ արիստոկրատ», ազգային ավանդույթների, ընտանիքի նահապետական նիստուկացի, կենցաղային խստագույն կարգապահության ու մաքրության ջատագով, մայրը՝ «համառ դեմոկրատ», ամուսնուն հլու-հնազանդ, երեխաներին անմնացորդ նվիրված աստվածապաշտ, հեզահամբույր ու անչափ գթառատ կին, որը ջանում է սրբությամբ կատարել իր կարդացած միակ գրքի՝ Ավետարանի պատվիրանները և այնքան բարի է, որ ամուսնու մահից հետո նրա՝ Ստամբուլում ապրող «դոստին» (սիրուհուն) նվերների մեծ կապոց է ուղարկում: «- Թող սաղ ըլեր, հազարը սիրեր», - ասում էր նա: Մայրս ցանկանում էր հորս հիշատակներից մեկը՝ Սրամբույի կինը, հարգված լինի» [4, 381]: Թոթովենցի գրիչը պաշտամունքի է վերածում որդիական սերը ծնողների, հատկապես մոր նկատմամբ. «Մայրը հավիտենական, մշտաթաթմ և մշտադալար լիրիկան է, դա ոսկյա ծառն է՝ երկնքի կապույտ դաշտում բուսած» [4, 386]... Եղբայրներին և մյուս հերոսներին բնութագրելիս էլ գրողն ընտրում է յուրաքանչյուրի բնավորության հիմնական գծերը բացահայտող որևէ դիպված, դրվագ, պատմություն, և ստեղծվում է իրական-գեղարվեստական կերպարների մի յուրօրինակ պատ-

կերասրահ: Ավագ եղբայրը՝ Հակոբը, պաշտում է իր Մարան ծիօն, «*նրանով լցնում իր հոգու ամբողջ պարապը*» [4,107], և երբ Մարանը հիվանդանում է, անասնաբույժներն էլ չեն կարողանում փրկել նրան, Հակոբը ծանր վիշտ է ապրում: Լևոնը, հոր մահից հետո իրեն լիիրավ տանտեր համարելով, վեճի է բռնվում իրենց տան քառասուն տարվա հավատարիմ ծառա Գոգոյի հետ, վիրավորում նրան և պահանջում, որ նա տնից հեռանա, բայց մյուս օրն առավոտյան մոտենում է պարտեզում ծաղիկները ջրով ծառային, փաթաթվում նրան: «*Գոգոն ... գրկեց Լևոնին, համբուրեց երկար և խորունկ սիրով շնչաց. «- Յավրո՛ւս, իմ աղվորի՛կ յավրո՛ւս»...*» [4, 407]: Հեղինակն «անհուն բերկրանքով» է հիշում մյուս եղբորը՝ Գևորգին, որի մեղմ միջամտությամբ «*նսեմ զայրույթը փոխվում էր վսեմ հանգստության*», կարոտով ջերմ տողեր նվիրում իր երեք քույրերին, նաև այն աղջիկներին, «*որոնք ծաղկում ու վառվում էին*» իր «*մանկության ափերի վրա*» [4, 422]: Ավա՛ղ, քույրերին վիճակվում է դժբախտ ճակատագիր, իսկ մյուս աղջիկներից շատերը եղեռնի զոհ են դառնում...

Վիպակի «պատկերասրահը» լրացնում են տասնյակ այլ կերպարներ՝ թեթևաբարո Մարիցան, նրա մոտ գիշերած և քաղաքով մեկ խայտառակված Նիկողոս աղան, սիրուհուն քնոցում թաքցրած Նշան աղան, «աղվընիկ խաղցնող» Ակոբը, նույն աղջկան՝ Վերոնիկային սիրահարված և խանդից կուրացած Վահրամ ու Հրաչ եղբայրները, որոնք աղջկան հասցնում են մահվան՝ նրան իրարից խլելով ու քաշքշելով: Կան նաև թուրքեր՝ հեղինակի հասակակից և մանկության ընկեր Շեմսին, նրա քույրը՝ «եթերային» Սանին, «մոխրակույտերի իշխան» Ալին, որը խորապես հարգում է հեղինակի հորը և հավատարմորեն ծառայում նրան: Ինչ վերաբերում է անանուն թուրքերին, ապա սրանք շատ հաճախ առանց առիթի՝ վիրավորում, ստորացնում են հայերին, նրանց ստիպում ապրանքը կես գնով վաճառել կամ ձրի տալ, մերժողին էլ դաժանորեն ծեծում են (գիտեն՝ անպատիժ կմնան), կեղծ ցուցմունքներով հայերի դեմ դատական գործեր են բացում, սպանում անմեղ հայերին և այլն: Պատահում է, որ հայերը պարտքի տակ չեն մնում և արժանի պատասխան են տալիս:

Թոթովենցը իրադրությունը, գործողությունը, մարդկանց ու նրանց առօրեական բազմաբնույթ փոխհարաբերությունները ներկայացնում է իր վերաբերմունքի հուզական տաք շնչով՝ ինքն էլ հերոսների հետ ոգևորվում է ու մտահոգվում, ուրախանում ու տխրում: Նուրբ դիտողականությունը, դիպուկ բնորոշումներն ու պատկերները, անբռնազբոս, միաժամանակ զուսպ ու սեղմ պատմելաձևը, Խարբերդի հյութեղ բարբառի համեմունքը, միահյուսված հեղինակային անխառն սիրո, ջերմ հումորի և անչափ բնական հեզնանքի հետ, ստեղծում են իրապատում մի միջավայր, որի գեղարվեստական տարածքը ճառագում է լույսով, պայծառ է ու անմոռանալի: Թոթովենցը թումանյանական շնչով անձնավորում է նաև բնությունն ու կենդանի արարածներին՝ արևը, այգին, հողն ու ջուրը, այգաբացն ու մայրամուտը, ծիօն ու շանը... Ասածից ամենևին չի հետևում, թե այն ամենը, ինչ շունչ ու ոգի է

առել Թոթովենցի գրչով, կատարյալ հովվերգություն է՝ անհոգ ու թեթև, հեշտ ու երանելի: Այո՛, երանելի է հայրենի եզերքը, ու թեև ճնշում է հայրենիքը զավթած վաչկատուն եկվորի լուծը, մարդիկ այստեղ էլ արժանապատիվ կյանքի կռիվ են մղում, սիրում են և ատում, զավակներ են ծնում ու մեծացնում, օրհնում են ու բամբասում, խենթանում ու խաբում, իմաստնանում ու հուսահատվում, մի խոսքով՝ ապրում են իրենց պապենական երկրում: Ու խորանում է հեղինակի թախծախառն վիշտը. Դա այն երկիրն է, որտեղ խարբերոցին ապրել է դարեր ու դարեր՝ մաքառելով ու ընկերանալով հողի հետ, ստեղծելով ու վերստեղծելով, արարելով ու արարվելով... Ավա՛ղ, դա նաև այն երկիրն է, որը ճակատագրի անգութ զարկով զրկվեց տերերից, փրկվածներն էլ, ահա, ապրում են աստանդական, և թվում է՝ մարում է, չկա վերադարձի հույսը: Եվ դարձյալ հայրենակիցների, հարազատ հող ու ջրի հանդեպ տաժած սերը շարունակում է հորդել վիպակի տողերում, դեմքերի ու դեպքերի անպաճույճ պատկերներում: Ընթերցողը տեսնում, շոշափում է Մեզրեի ու Խարբերդի գավառի հրաշք բնության ու մարդկանց այնքան հայաշունչ գեղեցկությունները, և նրա սրտում ուռչում է կարոտի ցավը, որից նա շնչահեղձ է լինում: Դարձյալ թվում է, թե չկա ելքը, չկա հույսի նշույլ անգամ, բայց քեզ համակում է մի անբացատրելի, պայծառ թեթևություն, քանզի հանկարծ հայտնագործում ես, որ հեղինակի համար կորուսյալ հայրենիքը լոկ հետադարձ հայացք չէ ու փոքրոգի վիատի խեղճ, բատապարտված կարոտաբաղձություն. այն ազային ոգու ու գոյի կենսատու ակունք է, իսկ այդ ակունքը, ինչպես համառորեն հավաստում է մեր հազարամյա պատմությունը, մշտաբուխ է ու անսպառ:

Դժվար է վիպակից ընտրել ու առանձնացնել մեջբերելիք հատված՝ վերոգրյալը հիմնավորելու համար: Դժվար է, որովհետև սովորական չէ սյուժեն, և ինչպես չես կարող պատմելով վերարտադրել քնարական բանաստեղծությունը, այնպես էլ չես կարող պատմել գրողի հույզը, այն անափ ջերմությունը, որ սփռված է վիպակի «տարածքում», բառերում, հեղինակի և հերոսների խոսքում ու մտորումներում:

Իսկ վերջաբանը, որն ավելի շուտ բանաստեղծական ռոմանտիկ վերջերգ է, որդիական անափ սիրո օրհներգ ու ծոն է կորուսյալ հայրենիքին.

«Այդ հին երկրում արևը ճշում է մրգի հափկներով, հողը շնչում է անսպառ խոտով, առվակները կարկաչում են, բացվում են մեծ առավույրներ, և իջնում են հրաթև վերջալույսեր, բարձրանում և կապույտում լողում է մի արծաթյա թաս՝ լիքը նոր կթած կաթով, փեղեղանում է գիշերն աստղահինչուն, ծառները սլանում են դեպի երկինք, և բոլոր ծաղիկները սարսռում են ու շնչում:

Այժմ ես կուգեի հանգչեցնել իմ հոգնած գլուխն այդ երկնքի կապույտ մարմարին և լսել այն երգը, որ հեղեղում են ծառները, առվակներն ու աստղերը»:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մանուկյան Ս. Ա., «Վահան Թորթվենց», Ե., «Հայպետհրատ», 1959:
2. Արզումանյան Ս. Հ., «Վահան Թորթվենց», Ե., «Հայպետհրատ», 1961:
3. Գևորգյան Ա. Զ., «Վահան Թորթվենց» (գրողի 1988-91թ. հրատարակված եռահատորյակի առաջաբանը):
4. Թորթվենց Վ., Երկեր երեք գրքով, գիրք 1, Ե., «Խորհրդային գրող», 1988:

Г.С. ВАРДАНЯН

ПОЭТИЧЕСКИЙ ОБРАЗ УТРАЧЕННОЙ РОДИНЫ В ПОВЕСТИ В. ТОТОВЕНЦА “ЖИЗНЬ НА СТАРОЙ РИМСКОЙ ДОРОГЕ”

Кратко исследуются описанные в повести жизнь и быт западноармянской губернии в начале 20-го столетия вплоть до геноцида. Выражается уверенность в том, что для писателя память о прошлом - не только боль безвозвратной утраты, но и полная оптимизма и нацеленная на будущее вера в непоколебимость национального духа. С этой точки зрения рассматриваются некоторые характерные особенности поэтики, языка и стиля повести.

Ключевые слова: родной край, геноцид, гнёт кочевника-пришельца, проникнутые армянским духом красоты, живительные истоки.

G.S. VARDANYAN

THE POETIC IMAGE OF THE LOST FATHERLAND IN V. TOTOVENTS' NOVEL “LIFE ON THE OLD ROMAN ROAD”

The life and routine of a West-Armenian province from the beginning of the 20th century up to the great genocide are briefly described in the novel. A firm confidence is expressed that the memory of the past is not merely the pain of an irretrievable loss. It is also a stable belief in national soul optimistically striving for the future. From this viewpoint the poetics, some linguistic and stylistic peculiarities of the novel have been introduced.

Keywords: fatherland (native country), genocide, the yoke of a nomadic alien, beauties of Armenian origin (souls), vivifying (life-giving) source.